

ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՏԱՅՈԼՈՒՄՆԵՐԸ ԱՇՈՏ ԱՔՐԱՀԱՄՅԱՆԻ ԳՐԱԲԱՐԻՑ ԱՇԽԱՐՀԱՔԱՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Է. Ա. ՄԿՐՏՉՅԱՆ

Հայաստանի ԳԱԱ քրեակից անդամ, պրոֆեսոր Աշոտ Արքահամյանը բազմամյա գիտական-մանկավարժական և լեզվաբանական գործունեության ընթացքում զբաղվել է նաև քերականությունների գրաբարից աշխարհաբար քարգմանելով եւ՝ առանձին երկեր, եւ՝ հայ մատենագիրներից ընտրված բառեր, նախադասություններ ու պատասխաններ¹:

Հնուտ լեզվաբանի քարգմանություններում առանձնապես ուշադրության են արժանանում գրաբարի քերականության բազմաթիվ հարցեր: Միանգամից պետք է նկատել, որ *սպույզ, ճշգրիտ եւ հուսալի քարգմանությունների հիմքում ընկած են քերականական ընթերցումներն ու նրբերանգները, այլ կերպ քերականական իրողությունների հաշվառումն ու կիրառությունը*:

Քննվող հարցին քերականության լայն ընթերցումով մոտենալու դեպքում չափազանց ծավալուն խոսք պիտի ասել, բայց բանի որ տվյալ պարագայում հնարավորությունները սահմանափակ են, ուստի կանգ առնենք ձեռքարկական եւ շարահյուսական մի բանի իրողությունների վրա, որոնք Արքահամյան քարգմանչի կողմից խստագույնս ուշադրության են արժանացել՝ դառնալով քարգմանության ոգին եւ էությունը:

1. Հստակորեն պատկերացնելով բայի խոնարհման համակարգում տեղի ունեցած պատմական փոփոխությունները, որոնք տարբեր աղբյուրներով նկատել են քերականներն ու լեզվաբանները², Ա.Արքահամյանը քարգմանություններում հավատարիմ է մնում գործածված օրինակափոխություններին եւ հետևողականորեն պահպանում ու ճշգրտորեն գործածում ժամանակաձևերի արտահայտած իմաստները:

Գրաբարը չունի ստորադասական եղանակի անցյալի ձևեր, եւ դրանց իմաստով գործածվում էին սահմանական եղանակի անցյալ անկատարի ձևերը: Օրինակ՝ Եւ գմխն եթէ սիրտ ուրուք *ստնոյր* եւ ուտէր. *ոչ վնասէր*, որպէս վարագի... ուտի միսն, եւ ոչ վնասէ. նոյնպէս եւ նոցայն՝ եթէ *ուրէր* ոք *չվնասէր* (Եզն., էջ 54). *առնոյր, ուրէր, ոչ վնասէր/չվնասէր նշանակում են ստնում էր (վերցնում էր), ուրում էր, չէր վնասում*, մինչդեռ Ա.Արքահամյանը ճիշտ էր վարվում՝ քարգմանելով. եթէ միսն էլ մեկի սիրտը *վերցնէր*, ու (նա) *ուրէր, չէր վնասի...* (Եզն., էջ 55): Այս նույն բայաձևերի մասին «Գրաբարի ձեռնարկում» հեղինակը ծանոթագրում է. Գրաբարում ստորադասական եղանակի անցյալ ապառնի ժամանակ չկա, *նրան փոխարինում է առաջին ապառնին կամ էլ սահմանականի անցյալ անկատարը*, ինչպէս այստեղ³ (ընդգծումը մերն է. Է.Ա.):

Երբ չիմիս նմանակությամբ սահմանական եղանակի ներկա ժամանակաձևը գործածվում է ապառնու իմաստով⁴:

Օրինակ՝ եթէ զշուրն քանեալ անապալ ըմպիցէ որ, *սապակի*. եւ եթէ գետնն աղացեալ՝ ջրով ըմպիցէ որ, ի ցանկութենէ *արկանէ* (Եզն., էջ 54). ընդգծված բայերը հեղինակը քարգմանում է կմեռնի, կցցի (Եզն., էջ 55) եւ ոչ թե *սապկում է* (մեռնում է), *զցում է*:

Ստորադասական ապառնին էլ գործածվում է ներկայի իմաստով. սա նույնպէս չի վրիպում քարգմանչի հայացքից: Օրինակ՝ Յորժամ զըմբռնեալն ի շնութեան որ *սպանանիցէ...* Ապա եթէ զանմեղն որ *սպանանիցէ...* (Եզն., էջ 32)՝ Երբ մեկը անառակության մեջ բռնվածին *սպանում է...* Իսկ եթէ մեկն *սպանում է* մի անմեղի... (Եզն., էջ 33): Կամ՝ Եւ *զհա՞րդ իցէ*. զի հրեշտակք երբ լսեն զպնունն Աստուծոյ՝ ուրախ լինեն (Եզն., էջ 122)՝ Ինչպէս է, որ հրեշտակները Աստծու ընդդէմ լսելու ուրախանում են (Եզն., էջ 123). *իցէ* ապառնին քարգմանված է ներկայով՝ Եւ եւ դողումն եւ սոսկումն ունի զարարածսն, յորժամ զպատիւ արարչին որ նոցա *մապուցանիցէ* (Եզն., էջ 14)՝ Եւ եւ ահ ու դողը պատում է արարածներին, երբ մեկը արարչի պատիվը իրենց է *մապուցում* (Եզն., էջ 15): Հիշյալ՝ *մապուցանիցէ* բայի վերաբերյալ ծանոթագրության մեջ հեղինակն իր միտքը ավելի որոշակի է

¹ Տե՛ս Ա.Արքահամյան, Գրաբարի ձեռնարկ, Երևան, 1976թ., Եզնիկ Կողբացի, Եղծ աղանդաց (Թարգմանությունը եւ ծանոթագրությունները Ա.Արքահամյանի), Երևան, 1994թ., Ստեփանոս Օրբելյան, Մյունխենի պատմություն (Թարգմանությունը, ներածությունը եւ ծանոթագրությունները Ա.Արքահամյանի), Երևան, 1986թ.:

² Տե՛ս Հայոց լեզվի պատմական քերականություն, Խ. Բ, Երևան, 1975թ., էջ 166-169 եւ այլուր:

³ Ա.Արքահամյան, Գրաբարի ձեռնարկ, Երևան, 1976թ., էջ 416, ծան. 51, հմմտ. նաեւ էջ 441, ծան. 81:

⁴ Հմմտ. անդ., ծան. 53, էջ 412, ծան. 309, էջ 430, ծան. 42, էջ 441, ծան. 75 եւ այլուր:

դարձնում. «*Յորժամ, որ, ուր, եթէ* եւ նման բառերով սկսվող նախադասությունների մեջ բայ ստորոգյալը սովորաբար ներկայի փոխարեն դրվում է առաջին ապառնիով, ինչպէս այստեղ: *Մապուցանիցէ = մապուցանէ*»:

2. Գրաբարում բայի խոնարհման ձևերն ու նրանց արտահայտած իմաստները բարդ են ու բազմազան, բանի որ խոնարհման ձևերն ու իմաստները կարող են նաեւ չհամընկնել: Ա.Արքահամյանն այս խնդրում մանրակրկիտ վերաբերմունք ունի: Անկախ բայաձևից՝ դիմավոր թե անդեմ, հեղինակը կրավորական եւ ներգործական իմաստները տարբերակում է, համապատասխանեցնում բնագրային միջավայրին՝ տեսանելի դարձնելով քերականական իմաստներն ու նախադասությամբ արտահայտված ճշմարտությունները: Դերբայները նույն ձևով արտահայտում են սեռային տարբեր իմաստներ, դրանք անհրաժեշտ է տարբերակել:

Օրինակ՝ Այլ նա առասիկ իբրեւ զկառս իմն *լծեալ* ի չորից երիվարաց զաշխարհս տեսանեմք (Եզն., էջ 14)՝ Եվ ահա տեսնում ենք այս աշխարհը ինչպէս մի կտոր՝ *լծված* չորս երիվարներով (Եզն., էջ 15). անցյալ դերբայը կրավորական նշանակությամբ է, որը որոշվում է բացառականով խնդրից՝ ի չորից երիվարաց: Եւ պատճառ չառնուքեանն *գործելին* եւ ոչ երկաթն (Եզն., էջ 32)՝ Եվ չարության պատճառը *պարարապողն է*, ոչ թե երկաթը (Եզն., էջ 33). ապառնի դերբայը ներգործական նշանակությամբ է՝ ենթակայական դերբայի իմաստով: *Ուրեղի եւ կրեղի* ապառնի դերբայները ծանոթագրված են այսպես. «Կրավորական նշանակությամբ է. ուտվելու, ուտելու ենթակա: Ներգործական է, ենթակայական դերբայի իմաստ է արտահայտում՝ *կրեղի*. կրող, բեռ տեղափոխող»⁵: Կամ՝ «Անորոշ դերբայում կրավորական սեռը ձևով եւ տարբերելու համար հեղինակը (Եզնիկ Կողբացին- Է.Ա.) գործածել է հարադրական բարդություն՝ *պաշարոն առնուլ*. պաշարել, իսկ *պաշարոն հարկանել* նշ. պաշարել»⁶: Կամ այսպիսի հարյուրավոր դիտարկումներ:

3. Գրաբարի հոլովական համակարգի առանձնահատկությունները, հոլովների, նախդրավոր եւ նախադրության կապակցությունների արտահայտած իմաստները պրոֆ. Ա.Արքահամյանի քարգմանություններում հաստիկ ուշադրության են արժանանում: Նա քերականական ուսումնասիրություններում հաճախ է գործածում «պատմական բացառական», «պարառական գործիական», «բացարձակ կամ անկախ սեռական», «սեռականով ավելադրություն», «վերացականը քանցբացականի փոխարեն», «բայական ավելադրություն դերբայական, դիմավոր ձևերով», «(նախդրի) տրական», «պետսիություն», «կրկնակի հայցական» եւ այլ արտահայտություններ, որոնց ճանաչումն իսկ ճշգրիտ ու պաշտոնաբար քարգմանության համար չափազանց կարևոր է:

Օրինակ՝ Մի՞թե եւ *զարալիզէ՞ն* եւս որ կարիցէ ասել՝ թե եւ զայն ուրուք տեսեալ իցէ (Եզն., էջ 80-82)՝ Մի՞թե մեկն էլ *արալեզի մասին* կարող է ասել, թե այն որեւէ մարդ տեսել է (Եզն., էջ 81-83): Այլ որպէս *զԱղեքսանդրէ* խաբէին դեր՝ թե կենդանի կայցէ (Եզն., էջ 84)՝ Բայց ինչպէս որ դեւերը *Աղեքսանդրի վերաբերմամբ* էին խաբեություն անում, թե կենդանի է (Եզն., էջ 85): Հեղինակի մեկնաբանությամբ այսպիսի բացառականը կախված է ասացական, հաղորդման իմաստ արտահայտող բայերից (*ասեղ, խաբեղ, բամբասեղ, ազդեղ, ամբաստանեղ* եւ այլն)⁸:

Պարառական գործիական են *զգեպով* (զՔասաղ գետով), *զբլով* (զԸրեշ բլով), *զքաղաքաւ* (զԱրախմէղ քաղաքաւ) նախդրավոր ձևերը, որոնցում զ նախդրը «մի բանի շուրջ լինելու իմաստն է արտահայտում»⁹:

Նախդիրները եւ նախադրությունները իրենց խնդիրների հետ բազմաթիվ իմաստներ են արտահայտում: Ա.Արքահամյանը ոչ միայն տեսականորեն բնութագրում է դրանք¹⁰, այլեւ խոր իմացությամբ դրանց արտահայտած իմաստները արձանագրում է քարգմանություններում (սա գրաբարից աշխարհաբար կատարվող քարգմանություններում ամենաբարդ երևույթներից մեկն է, եթե ոչ ամենաբարդը):

Միայն մի երկու օրինակ՝ Եւ այսու ամենայնիւ յայտ է՝ թե գոր *առ սապուռածսն ունին*, անարգեն շատր եւ անպատուն (Եզն., էջ 14)՝ Եվ այս ամենով պարզ է, որ այն, ինչ (նրանք) *աստվածներ են համարում*, շատերն անարգում եւ անպատում են (Եզն., էջ 15): *Առ ի* գլխաւարն եւ գտուերն զերկուց մեծացն անօրոց ի բաց ի միջոյ *փարապելոյ* (Եզն., էջ 12)՝ Սովերն ու խավարը երկու մեծ անոթների միջից *վերացնելու համար* (Եզն., էջ 13). *առ* նախդիրը բացառականի հետ՝ *ի փարապելոյ*, արտահայտում է նպատակի իմաստ: Տաճիկ ուղտուք արձակէ արս *զհողոյ* եւ *զջրոյ* («Գրաբ. ձեռն.» էջ 299)՝ Արագընթաց ուղտերով մարդիկ է՝ ուղարկում *հողի եւ ջրի*¹¹: Բայց յորժամ դու զայդ խնդրեցեր, անցեալ լիցիս *զօրինօր* (անդ, էջ 308). Չ նախդիրը գործիականի հետ՝ օրենքից դուրս գալու, այսինքն՝ բացառություն կազմելու իմաստով¹²: Անցուցին ըստ Տափերն կամուրջ (անդ, էջ 302). Ըստ նախդիրը հայցական հոլովի հետ՝ մի բանից այն կողմ նշանակությամբ¹³: *Ըսր նոցանէ* եւ պարապելաքն այսպիսում ճգնութեան դիւանագիրք մատենից՝ ներքողականաց ի մէջ արժանի եղին ասից (անդ, էջ 329). *Ըսր*

⁵ Անդ, էջ 415, ծան. 23, հմմտ. նաեւ ծան. 44, էջ 406, ծան. 129 եւ այլուր:

⁶ Անդ, էջ 415, ծան. 39, 40:

⁷ Անդ, ծան. 16:

⁸ Հմմտ. անդ, էջ 416, ծան. 62, էջ 417, ծան. 74, էջ 428, ծան. 201, էջ 434, ծան. 1 եւ այլն:

⁹ Անդ, էջ 397, ծան. 12:

¹⁰ Տե՛ս անդ, էջ 227-266:

¹¹ Անդ, էջ 406, ծան. 137 (Չ նախդիրը բացառականի հետ է, արտահայտում է նպատակի իմաստ):

¹² Անդ, էջ 412, ծան. 301:

¹³ Անդ, էջ 409, ծան. 211:

նախորդի հազվադեպ գործածություն՝ *անան, պես* նշանակությամբ, «*բար ևոցանկ*» նշ. նրանց պես, նրանց նման¹⁴:

4. Շարահյուսական իրողությունները լայն գործածություն ունեն պոռֆ. Ա.Աբրահամյանի թարգմանություններում:

Շարահյուսությունը որպես քերականության առանձին բաժին թեև ուսումնասիրության չի ենթարկվել Ա.Աբրահամյանի կողմից¹⁵, սակայն «Գրաբարի ձեռնարկում», Եզնիկի, Օրբելու թարգմանություններում, ձեռաբանական ուսումնասիրություններում այնքան դիտողություններ, ծանոթագրություններ է ներկայացնում եւ ձեռաբանական-շարահյուսական զուգահեռներ անցկացնում, որ դրանց զուսարը անցնում է հազարներից եւ ըստ էության կարող է հատորներ կազմել:

Հարց է ծագում. դրանցում շարահյուսական ի՞նչ հարցեր է մեկնաբանում:

Կարելի է ասել՝ շարահյուսական առանցքային բազմապիսի հարցեր, ինչպիսիք են՝ նախադասության, բառակապակցության՝ կառուցվածքային առանձնահատկություններ, նախադասության անդամների կապակցությունը՝ նրանց շարադասությունն ու համաձայնությունը, հոլովների, նախդրավոր եւ նախադրությամբ կապակցությունների շարահյուսական կիրառությունները եւ այլն:

Այսպես՝

ա) Գրաբարում կան դերբայական կառույցներ, որոնք նախադասության արժեք ունեն, եւ թարգմանելիս դրանք պետք է ներկայացնել ստորոգմամբ:

Օրինակ՝ Եւ *պարտուհասեալ զնոսա որպէս զմահապարտս* («Գրաբ. ձեռ.», էջ 299) կառույցը ծանոթագրված է. «Դերբայական նախադասություն է. *պարտուհասեալ* անցյալ. դերբայը ստորոգյալ է, ուստի պետք է թարգմանել որպես դիմավոր բայ՝ *անարգեցի, նախարեցի*»¹⁶:

Բարդ նախադասության բաղադրիչը՝ երկրորդական նախադասությունը եւս կարող է լինել դերբայական կառույց: Հեղինակը գրում է. «Դերբայական նախադասություն է: Անորոշ դերբայը պետք է թարգմանել դիմավոր ձեռով: «...Մինչեւ դիմել ջուրը գետոյն ի փորուածս» Այնպես, որ գետի ջրերը հոսեն դեպի փորվածքը»¹⁷: Թարգմանություններում՝ հետետողականորեն մինչեւ շաղկապին հաջորդող դերբայական նախադասությունները վերածվում են դիմավորի ձեռերի: Օրինակ՝ Եւ այնչափ յանդգնեալ սատանայության ոգովմ, *մինչեւ ի պարզամաց Հոգւոյն սրբոյ բաղ հանել...* (Եզն., էջ 206)՝ Եվ սատանայական հոգով այնքան հանդուգն էր դարձել, որ *մինչեւ իսկ՝ սուրբ՝ հոգւոյ պարզամաներից ծաղկաբաղ էր անում* (Եզն., էջ 207). այս բարդ ստորադասական նախադասության գլխավորն էլ է՝ դերբայական նախադասություն: Եւ վառեաց հուր յարարածս մորա. *մինչեւ կարճել եւ խափանել զօրէնս նորա յաւորցն Յովհաննու Սկորչի* (Եզն., էջ 216)՝ Եվ նրա՝ արարածների մեջ հուր վառեց, *մինչեւ իսկ արգելեց եւ խափանեց նրա օրենքները՝ Հովհաննու Սկորչի օրերից* (Եզն., էջ 217) (ընդգծումները մերն են՝ Ե.Մ.):

բ) Ուշագրավ է «Լասն զի սերմն մարմնավորաց է» կառուցվածքի նախադասությունը՝ Որովհետեւ մարմնավորումները սերմ ունեն, որովհետեւ սերմը հատուկ է մարմնավորներին: *Սեբնն* բառը կապված է *մարմնավորաց* սեռականով՝ դրված բառին է-ի միջոցով եւ արտահայտում է ունենալու, հատուկ լինելու իմաստ¹⁸:

գ) Ա.Աբրահամյանը հարյուրավոր տեղերում ընդգծում է սեռական եւ տրական հոլովներով ենթակային: Օրինակ՝ «Գրաբ. ձեռնարկում» (էջ 320), 14 տողում անցյալ դերբայի մոտ նշվում է սեռական ենթակայի 7 դեպք, իսկ նախորդ երկու էջերում միադիմի՝ բայի մոտ նշվում է տրական հոլովով ենթակայի 5 դեպք (ի գուր է կա՝ 1 կա՛ն ասել *ունեք* ի կա՛ս. այլ որպէս *մարդոյ* ոչ է՝ հնար փոխել ի կերպարանս ինչ. չէր մարթ *անմարմնոցն* րնդ կանայս մարմնաւ տրս ամուսնանալ...): Թարգմանություններում պահպանվում է փյոջ մոտեցումը. Երկուց *անուրարաց* ի միասին չէ մարթ լինել (Եզն., էջ 20)՝ Երկու *անսպիեղծներ* միասին չեն կարող լինել (Եզն., էջ 21):

Տրական հոլովով ենթական դրվում է մահւ անորոշ դերբայի հետ (detivus cum infinitivo)¹⁹. «...ասեն *պարեկ* որձաքար *միմացն*» Ասում են, որ որձաքար՝ վիմերը պայթելիս են եղել: Եւ *դիւացն աղաղակել* եթէ... (Եզն., էջ 72)՝ Իսկ դեռեմն աղաղակում էին, թե... (Եզն., էջ 73): Եւ արդ բան անդէն *կապել կախարդացն* զդեմ (Եզն., էջ 70)՝ Եվ արդ՝ փոխանակ կախարդների միջոցով տեղում կապելու դեղ (Եզն., էջ 71):

դ) Նախադասության անդամների համաձայնությունը ուշադրության կենտրոնում է: Դիտողություններ եւ բացատրություններ են արվում՝ կապված անեզական անունների, հավաքական իմաստ արտահայտող բառերի, հարաբերականների, թեք հոլովով ենթակայի եւ այլնի հետ առնչվող համաձայնության հետ, որը թարգմանվող նյութը ճշգրտորեն ներկայացնելու լավագույն միջոցներից է:

Օրինակ՝ *Տիրեցին* աշխարհիս Հայոց *ազգն* Մասանայ պարսկի («Գրաբ. ձեռ.», էջ 341). տիրեցին ստորոգյալը ծանոթագրված է. «Հոգնակի թվով ստորոգյալ՝ եզակի թվով ենթակայի (ազգն) մոտ: Համաձայնությունը

կատարված է բախառության օրենքով: Աշխարհաբար պետք է թարգմանել եզակի թվով²⁰: Հաճախ հոգնակի հարաբերյալը ունենում է եզակի հարաբերական. Բազում անգամ մարտնչէր ընդ *այնոսիկ որ ոչ ընդ նովին* օրինօք մտանէին (անդ). որ հարաբերականը ծանոթագրված է. «Եզակի հարաբերական (որ) հոգնակի հարաբերյալի մոտ (այնոսիկ): Թարգմանելիս թվով պետք է համաձայնեցնել²¹: Մի այլ տեղում նշվում է. «Այս բառակապակցությունը («բաջի որդւոյն Արտաշիսի») *Արարաւագոյ* ենթակայի լրացումն է, հետագած է նրանից²²: Մանրամասն է ծանոթագրված «Ջի այժմիկ ձեր ծառայից զմեր տերանց ձերոց զբարձ կալեալ է. (անդ, էջ 299) նախադասությունը. «Ենթական է *չէր*՝ դրված սեռականով, «ձեր կալեալ է» նշ. դուր գրավել եք (բարձը, գահը): Ենթական (ձեր) եւ հատկացուցիչը (մեր) ունեն նույն հոլովով դրված լրացումներ (բացահայտիչներ՝ ծառայից, տերերի- Ե.Մ.): «*չէր ծառայից*» դուր՝ ծառաները, «*մեր տերանց չէրոց*» մեր՝ ձեր տերերի: Ամբողջ նախադասությունը՝ Որովհետեւ այժմ դուր՝ ծառաները, մեր՝ ձեր տերերի բարձը գրավել եք²³»:

ե) Հոլովների, նախդրավոր եւ նախդրությամբ կառույցների շարահյուսական կիրառություններին վերաբերող նշումներով թարգմանությունը հստակեցվում է, բնագրային բարդ երևույթները մատչելի են դառնում:

Այսպես՝ նպատակի պարագան արտահայտվում է նախդրավոր բացառականով, անորոշ դերբայի տրականով, հայցականով, որոնք նույնպես կարող են լինել նախդրավոր կամ անկախ՝ առանձին կամ դարձված կազմելով:

Օրինակ՝ Մերք կոչի իբրեւ զծառայ *առ ի* սպասըն՝ յոր կարգեցա՝ հասանելոյ (Եզն., էջ 12)՝ Մերք կանչվում է իբրեւ սպասավոր՝ հասնելու այն ծառայությանը (Եզն., էջ 13). *առ* նախդիրը ի հասնելոյ բացառականի հետ է²⁴: Եւ ընդ սակաւ ատուքս եկին բերին զայն ինչ, *զորմէ* յղեացն («Գրաբ. ձեռն», էջ 299). *զ* նախդիրը բացառականի հետ է եւ նպատակի իմաստ է արտահայտում: Յայնժամ վաղվադակի հրաման առեալ թագաւորէն՝ *սկիզբն առնելոյ զխոժադուժ կողմանսն Մարաց* («Գրաբ. ձեռ.», էջ 290). *սկիզբն առնելոյ* տրականը նշ. սկսելու, սկսելու համար²⁵: Իցէ՞ որ որ մտանիցէ զաղա ի տուն ընկերի իւրոյ *զերծել ինչ* (Եզն., էջ 218)՝ Կլինի՞, որ մեկը զաղտնի կերպով մտնի իր ընկերոջ տուն՝ *բան զողանալու* (Եզն., էջ 219). անորոշի հայցականն է նպատակի պարագա: Եւ ոչ միայն այնչափ, այլ եւ զօրութիւն զգեցոյց նոցա՝ *կոխել զգորս տեսուն իրեանց* (Եզն., էջ 216)՝ Եվ ոչ միայն այսքանը. նաեւ զօրությամբ օժտեց նրանց՝ *ոյրնապակ անելու իրենց փիրոջ զորքերը* (Եզն., էջ 217): Հայցականի նախդրավոր ձեռը եւս կլինի նպատակի պարագա. իբրեւ զինոց *առ այրել զուխր...* («Գրաբ. ձեռ.», էջ 232, կետ 6-րդ): Հանդերձ քո մի՛ լիցի առ ի պճնել (անդ): Եւ ետուն նոցա զոստերս իրեանց *ի կնութիւն* // *ի կնութեան* (անդ., էջ 255, կետ 3-րդ): Նա եւ նախարարք եւ մեծարարք աւագանոյն ընթացեալք *ի տեսանել* (անդ, էջ 258, կետ 6-րդ):

Ահա այս ձեռով կարելի է խոսել նաեւ նախադասության մյուս անդամների, հատկապես ժամանակի պարագայի, վերաբերության, հանգման խնդիրների մասին:

Վերջացնելով մեր խոսքը՝ նկատենք, որ մի համառոտ հոդվածով հնարավոր չէ ամբողջությամբ ներկայացնել քերականական իրողությունների բազմազան արտացոլումները Ա.Աբրահամյանի թարգմանական մեկնություններում, որովհետեւ *դրանք հսկայածավալ նյութ են արժանի մանրամասն ուսումնասիրության*:

МКРТЧЯН Э.С. — Отражение грамматических реалий в переводах Ашота Абраамяна с грабара на ашхархабар. В статье приводится ряд достойных внимания явлений и форм грамматики грабара в переводах проф. А.А.Абраамяна, с грабара на ашхархабар. Они относятся к системам склонения и спряжения, предложным структурам и структурам с предлогами, структуре предложений и выражению членов предложения, которые особенно широко применяются в переводческих комментариях и примечаниях “Пособия грабара” и сочинения “Ехц ахандоц”, а также главным образом обеспечивают научное качество и точность перевода.

¹⁴ Անդ, էջ 422, ծան. 6:

¹⁵ Տե՛ս հեղինակի «Բայր ժամանակակից հայերենում», Երևան, 1962թ., «Հայերենի դերբայները եւ նրանց ձեռաբանական նշանակությունը», Երևան, 1963թ., «Գրաբարի ձեռնարկ», Երևան, 1952-1976 թթ. եւ մյուս ուսումնասիրությունները:

¹⁶ Ա.Աբրահամյան, Գրաբ. ձեռնարկ, Երևան, 1976թ., էջ 405, ծան. 100:

¹⁷ Անդ, էջ 427, ծան. 175, այլն էջ 416, ծան. 47, էջ 401, ծան. 49:

¹⁸ Անդ, էջ 416, ծան. 66, նաեւ էջ 401, ծան. 5, որտեղ նշվում է, թե սեռականի փոխարեն երբեմն տրական էլ է դրվում՝ «Այնմ խնդրոյ չիք սպառուած» (Եզնիկ)՝ Այն խնդիրը վերջ չունի:

¹⁹ Հմմտ. անդ, էջ 428, ծան. 192, 194:

²⁰ Անդ, էջ 429, ծան. 7, հմմտ. նաեւ էջ 408, ծան. 188:

²¹ Անդ, էջ 429, ծան. 10, հմմտ. նաեւ անդ, ծան. 3:

²² Անդ, էջ 398, ծան. 45:

²³ Անդ, էջ 406, ծան. 149:

²⁴ Անդ, էջ 414, ծան. 10:

²⁵ Անդ, էջ 401, ծան. 45: